Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>>

ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց **<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ**

Առարկա **Հայոց լեզու և գրականություն**

Թեմա՝ **Արժեհամակարգի ձևավորումը հայ գրականության և հայոց լեզվի դասավանդման շրջանակներում**

Վերապատրաստող, մենթոր՝ **ԱրմենուհիՄելքոնյան**

Ուսուցիչ՝ **Միքայելյան Մերի**

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐՑԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
4. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում է նաև արժեքները և դրա ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: **Արժեհամակարգ** հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական,մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է մարդու ներդաշնակ, բազմակողմանի զարգացման և ձևավորման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմություն , նրա ստեղծած մշակութային արժեքների , գիտական նվաճումներ համար հպարտության զգացում: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործնընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս եւ այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի գրականության, պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է գրականության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է թե պրակտիկ, և թե ՛ գիտական գործոններով:

Թեման այսօր արդիական է այնքանով, որ նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի

գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլեւ մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի,գործելակերպի, հոգեբանության եւ արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջեւ ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու,կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեւորմանը՝ զարգացնելով համակեցության,հանդուրժողականության,համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողների մեջ **զ**արգացնել արժեքային համակարգի ձեւավորումը հայոց լեզվի դասաժամին: Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները եւ դրանցում ներկայացված տեսակետները:

Սովորողին ուղղորդել, սովորեցնել առժեհամակարգի կարևորությունը և դրա ձևավորումը առարկայի շրջանակներում:

Հետազոտական աշխատանքային խնդիրներն են՝ ուսունասիրել արժեհամակարգի ձևավորումը հայ գրականության և հայոց լեզու առարկաների շրջանակներում, ներկայացնել արժեհամակարգի ձևավորման կարևորությունը դպրոցում, բացահայտել արժեհամակարգի ձևավորման արդյունավետ եղանակներ:

Առաքելությունը: Ժամանակակից դպրոցի կարեւորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգեւոր արժեքների ձեւավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:Այդ

ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատեւելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլեւ պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Փորձենք հասկանալ թե ինչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը հայ գրականության դասերին: Չ՞է որ հայ գրականության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Հայ գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն եւ ազգային արժանապատիվ գոյություն: Հայ գրականության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջՀայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

1. Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին:
2. Կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
3. Ունենա ազգային ինքնագիտակցություն:
4. Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

5. Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում:
6. Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը:
7. Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգեւոր արժեքները պահպանելուանհրաժեշտությունը:
8. Գիտակցի, որ կյանքում իր համար կարեւորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտականվարպետությունը և այլն…

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ, տեղեկատվական աղբյուրներից հոսողե հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական եւ անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը,ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի,հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի,որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության եւ արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը:

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ ,տեղեկատվական աղբյուրներից հոսողե հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը,ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. ,...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևիցե:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզու

առարկայի դասավանդման ընթացքում հարցադրման մեթոդիկայի միջոցով:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը: Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսափորձի, հետաքրքրությունների ու

երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը եւ բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Հայոց լեզու առարկայի մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Ուսումնական գործընթացի կազմակերպման առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը: Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնել այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Արժեքային համակարգի ձևավորումը Հայ գրականություն առարկայի դասավանդման գործընթացում:

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձեւավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: ,Ուսուցչի գաղափարապես

աղքատ, կենսականորեն անբովանդակ,դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է:

Գրականության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու, նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, կոնկրետ ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքի մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում : Գրականության առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարեւոր խնդիրներ:

1.Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց գրականության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:

2. Ցույց տալ հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկայիննվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր եւ հարգանք աշխատանքի,աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել գրական գործիչների՝ գրականագիտական կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ գրական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:

8. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական եւ պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

9. Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

10. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

11. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային եւ ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները. խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

12. Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ:

Աշակերտները պետք է նկատեն, որ դրանցում դրսևորվում են հերոսի նվիրվածությունը, նպատակադրումը,աշխատասիրությունը, դժվարությունները հաղթահարելու մեծ հավատը, հաստատակամությունն ու վճռականությունը, բողոքը հոռի բարքերի դեմ :Գրականությունը սովորեցնում է մարդկանց ճիշտ ապրել կյանքը, լինել բարի,անաչառ, ճշմարտախոս և ազնիվ, մարդկային և մարդասեր, հայրենասեր, ծնողասերև ընկերասեր: Այս ամենը կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ՝ օժտված լինել բարոյական բարձր հատկանիշներով, ունենալ բարոյական բարձր սկզբունքներ:

Հ. Թումանյանի կյանքի, ստեզծագործական ուղու և նրա ողջ ստեղծագործության ուսուցումը մեզ տալիս է հնարավորություն՝դաստիարակելու բարոյական բարձր հատկանիշներով օժտված մարդ: Թումանյանն ինքնին այդպիս էր: Նա հայրենիքի նվիրյալ էր և հնարավորից մինչև անհնարինն արել է իր հայրենիքի համար: Այսօր ևս շարունակում է անել ՝իր ստողծագործությունն ուսումնասիրող յուրաքանչյուր անհատ զգում է այդ անսահման հայրենասիրական ոգին: Հեղինակի անսահման հայրենասիրությունը մենք հատկապես տեսնում ենք նրա հայրենասիրական բանաստեղծություններում:

Պլան

Դասի նպատակները.

Ուսուցողական. ուսուցանել ,Հայրենիքիս հետե բանաստեղծությունը, գրողի հիմնական ասելիքը, գրելու շարժառիթները:

Զարգացնող. զարգացնել աշակերտների վերլուծական հմտությունները և գիտելիքները:

Դասի ընթացքը. խաչաձև հարցերի միջոցով ամփոփել անցած դասը, այնուհետև աշակերտներին հարցնել դասանյութը: Դասարանում ամփոփել <<Հայոց վիշտը>>

<<Հոգեհանգիստ>> , <<Հայոց լեռներում>> բանաստեղծությունները: Աշակերտներից մի քանիսին հարցնել բանաստեղծությունները անգիր և նրանց վերլուծությունը:

Ամփոփել ասվածը և անցնել նոր դասի հաղորդման:

Նոր դասի հաղորդում

Խթանում.

Ի՞նչ ժամանակաշրջանում են գրվել այս բանաստեղծությունները:

Ո՞րն է գրողի հիմնական ասելիքը:

Ո՞ր հարցերն էին ամենացավոտը Թումանյանի համար:

Իմաստի ընկալում.

Հերթով ցուցադրել սահիկները, կարդալ և մեկնաբանել դրանք: Սահիկաշարում ներկայածված են Նվարդ Թումանյանի, Թումանյանի ընկերների հուշերը բանաստեղծի մասին: Սահիկներում ցուցադրված նյութը կարդալ, բացատրել, պատմել նաև Նվարդ Թումանյանի՝ Էջմիածնում կատարած աշխատանքը: Սահիկների նյութից բխեցնել ,Հայրենիքիս հետե բանաստեղծության միտքը և Թումանյանի ասելիք: Նյութի բացատրման ընթացքում կարդալ բանաստեղծության համապատասխան հատվածները, որպեսզի էլ ավելի տեսանելի դառնան Էջմիածնում կատարված դեպքերի և ,Հայրենիքիս հետե բանաստեղծության սյուժետային նմանությունը: Նյութը բացատրելուց հետո կարդալ բանաստեղծությունը ամբողջությամբ:

Կշռադատում.

1. Ո՞րն է հեղինակի ասելիքը:
2. Ո՞րն էր Թումանյանի տեսլականը:

Տնային առաջադրանք.

<<Հայրենիքիս հետ>> բանաստեղծությունը սովորել անգիր:

Ուսուցիչը ընթերցում <<Հայրենիքիս հետ>> բանաստեղծությունը և հատված առ հատված վերլուծում, ինչպես նաև լսում է աշակետների կարծիքները, թե ինչ է ցանկանում ասել բանաստեղծը:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում

Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,

Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝

Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,

Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,

Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տխո՛ւր, դատարկ ու խավար,

Զարկվա՛ծ հայրենիք,

Զրկվա՛ծ հայրենիք:

Չմոռանանք նաև, որ Թումանյանը այս բանաստեղծությունը գրել է 1915 թվականին, երբ թվում էր թե ամա բան մարել է , մեռել և հայրենիքը դարձել է ողբի և որբի, բայց հին ու նոր վերքերով դեռ կանգուն հայրենիքի համար դեռ պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած : Եվ այն հայրենիքը, որ սկզբում զարկված ու զրկված էր պիտի դառնա նոր ու հզոր հայրենիք: Առհասարակ լավատեսությունը Թումանյանի բնորոշ հատկանիշ է, ինչը փոխանցվում է նաև աշակերներն, և նույնիսկ հարենիքի ահասարսուռ պահերին, որին ավաղ բախվեց նաև աշակերտական սերունդը ևս, արդեն մոտենում է մեծ հավատով և հայրենասիրությամբ: Ահա Թումանյանի ,Հայրենիքիս հետե բանաստեղծությունը գրված է մեծ եղեռնի անմիջական տպավորությամբ: Ինչպես նա, այնպես և նրա ընտանիքի բոլոր անդամները՝ տղաներն ու աղջիկները, այդ ժամանակ կանգնած էին ժողովրդի կողքին և անում էին առավելագույնը, ինչ հնարավոր էր: Նրա աղջիկներն Էջմիածնում, ուր հավաքվել էր հայ գաղթականությունը, գթության քույրեր էին, նրա որդիներից մեկը՝ Արտավազդը, 1918-ին սպանվեց Վանում, իսկ ինքը՝ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, ամեն ինչ անում էր ժողովրդին խաղաղեցնելու և վաղվա հույսով ապրեցնելու համար: ,Հայրենիքիս հետե բանաստեղծությունը դրա վկայությունն է:

Եվ բացի հայրենասիրական բանաստեղծություններց արժեհամակարգ է ձևավորում նաև հեղինակի քառյակները, որոնք թեև կազմված են չորս քառատողից, սակայն մեծ ասելիք են պարունակում իրենց մեջ:

Չենք կարող չնշել նաև Թումանյանի պոեմներն ու պատմվածքները: Պատմվածքներց առաձնացնենք ամենաարդիականն ու ընթերցվածը.

<< Գիքորը>>

Հոր պահանջով Գիքորին գյուղից ուղարկում են քաղաք, որպեսզի հոր խոսքերով Գիքորը մարդ դառնա: Քաղաքում երեխան բազում դժվարությունների է հանդիպում, որոնք էլ լավ նկարագրում են մարդկանց ապրելակերպը, մտածելակերպը և առօրյան այդ ժամանակաշրջանում: Իմ կարծիքով այն ժամանակ մարդիկ ավելի շատ էին մտածում թե հարևանը կամ կողքինը ինչ կմտածի իր մասին, դա լավ ներկայացնում է բալի հետ կապված պատմությունը: Խավերի տարբերությունը նույնպես վառ ներկայացվում է պոեմում: Չէ՞ որ կինը անընդհատ նեղացնում էր տղային, ցույց տալով որ բանի պետք չէ: Կարևոր խնդիրներից, որը ներկայացվում է պոեմում, դա մարդկանց անտարբերությունն է ուրիշների հանդեպ: Տեսնելով Գիքորի վատ վիճակը տանտերը կարող էր նրան հանգիստ թողնել որոշ ժամանակով կամ գյուղ ուղարկել, բայց նա Գիքորին հասցրեց այնպիսի առողջական վիճակի, որ բարձր տենդի պատճառով վերջիվերջո մահացավ: Թումանյանը այդ գործով ուշադրության կենտրոն է բերել այնպիսի խնդիրներ, որոնք քննարկվում են առայսօր: Այդ թեմաներից են՝ անտարբերությունը, խավերի անհավասարությունը, մեծերի և փոքրերի միջև անհասկացությունները: Հեղինակը այս պատմվածքը ընթերցելիս աշակերտների մեջ շատ հարցեր են առաջանում և նրանք նույնպես վերլուծության են ենթարկում պատմվածքը և քննարկում է սկսվում դասարանում: Ստեղծվել է նաև այս պատմվածքի էկրանավորումը, ինչը անտարբեր չի թողել հեռուստադիտողներին:

Պատահական չէ նաև, որ Թումանյանի ծննդյան օրը նշվում է Հայաստանում որպես գիրք նվիրելու օր: Եվ իհարկե մեր սերունդը որքան շատ զբաղվի ընթերցանությամբ այնքան կունենանք բարձր աժեհամակարգով հասարակություն: Բարձրարժեք է այն գրական երկը, որ, ունենալով ազգային հող ու ազգային սյուժե, կատարում է խոր ընդհանրացումներ, արծարծում համամարդկային արժեքներ: Այդպիսի երկերը հարատևում են դարերով, կրթում ու դաստիարակում սերունդներին: Այդպիսի մնայուն արժեք է Ռաֆֆու <<Սամվել>> վեպը, որը սերունդներին հայրենասիրության դասեր է տալիս: Դպրոցում գրականության ուսուցումը ոչ միայն ճանաչողական, կրթական այլև դաստիարակչական նշանակություն ունի: Ուսուցչի առաջնահերթ խնդիրներից է նաև աշակերտների մեջ հայրենասիրության դաստիարակումը, հայրենասիրության մասին ամբողջական պատկերացում տալը: Այստեղ արժի հիշել վեպի առաջաբանից հետեւյալ տողերը. ,Խրախուսվելով այն

գաղափարով, թե որքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլորությունները, աշխատում է հեռու պահել իրեն նրանց կատարած սխալներից...:

Երբ հիմնական ուշադրությունը դարձվում է միայն Սամվելի կերպարի վերլուծությանը և նրա միջոցով հայրենասիրության բացահայտմանը, ստացվում է միակողմանի, ոչ համոզիչ: Դրա համար նախ պետք է ծավալել զրույց հայրենասիրության մասին, իմանալ սովորողների պատկերացումները հայրենասիրության մասին, իմանալ, թե իրենք ինչքանով են հայրենասեր, որն է իրենց դերը հայրենիքում, իրենք ինչի են պատրաստ հանուն հայրենիքի: Շատ աշակերտների կարծիքով հայրենասեր կարելի է դառնալ միայն հայրենիքի համար կռվելով, պատերազմներին մասնակցելով: Աշակերտներին ամբողջական պատկերացում տալու վեպի մասին, ինչպես նաև կերպարը սպառիչ բնութագրելու համար մեկնաբանման ողջ ընթացքում պետք է միշտ դիմել հեղինակին, մեջբերումներ կատարել վեպից: Առանց փաստերի ու օրինակների՝ վերլուծությունը զուրկ է որոշակիությունից, վերացական է: Ուսուցիչը աշակերտին պետք է մղի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի՝ նախապես որոշ ուղղություն տալով: Սամվելի կերպարի ամբողջական բացահայտման համար աշակերտների միջև աշխատանքի բաժանում եմ կատարում: Աշակերտներից ամեն մեկը ինքը պետք է կարդա իր գրի առած հատվածները, ինքը մեկնաբանի,արտահայտի իր վերաբերմունքը՝ հիմք ընդունելով նախօրոք տրված պլանը. 1.Սամվելը՝ պատմական անձնավորություն. 2. Ընթերցողի առաջին հանդիպումը Սամվելի հետ. 3. Սամվելի ժողովրդականությունը. 4. Սամվել և Աշխեն.5.Հերոսի ներքին դրաման ու տագնապը. 6. Որդու և ծնողների գաղափարական հակամարտությունը. 7. Զգացմունքների պայքար. 8. Հայրենիքի սերը և ծնողականմարդկային ներքին զգացումը .9.Հոր և որդու երկխոսությունը .10.Շողացող սուրը մաքրեց փառավոր տոհմի անվան վրա դրված սև բիծը. 11. Արյան մեջ թավալվող հոր և երկար ժամանակ անշարժ արձանի նման կանգնած Սամվելի հոգեկան ծանր դրաման. 12. ,...այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը. 13. Հոգեբանական ավարտի արագ ու համոզիչ լուծումը: Աշակերտները պետք է գիտակցեն և հասկանան, որ հայրենասիրությունը այնքան խորը զգացմունք է, որի առաջ կարող են խոնարհվել մարդկային մի շարք զգացմունքներ: Հենց այս հանգամանքը բացահայտելու գործին ուսուցիչը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի այն ժամանակ, երբ խոսվում է Սամվելի՝ ծնողներին սպանելու արարքի մասին: Չպետք է պարզունակ

ձևով ներկայացնել սովորողին, թե հորն ու մորը սպանելը Սամվելի համար մի հասարակ բան էր: Ծնողասիրությունը սուրբ բան է, ու եթե մեկը ձեռք է բարձրացնում ծնողի վրա, նշանակում է նրա արարքը պետք է պատճառաբանված լինի՝ հանցագործ չկոչվելու համար:

Աշակերտների վրա խորը ազդեցություն է ունենում յոթերորդ դասարանի դասագրքում ընդգրկված Դերենիկ Դեմիրճյանի <<Ավելորդ>> պատմվածքը: Պատմվածքի հերոսը Հաճի աղան էր, ով մի վաճառական էր, որը շատ է սիրում իր ունեցվածք: Հաճի տղայի ընտանիքում մի ավանդույթ կար, որ հենց որ Հաճի աղան տուն է մտնում, նրա համար ընտանիքի կանայք սուրճ պատրաստեին: Հաճիի քույրը՝ Սրբունը, որը կորցրել էր իր ամուսնուն, հիվանդանում է տիֆով և անդամալույծ է դառնում, աղան նրան բերում է իր տուն և նրա համար անկյուն է հատկացնում,որովհետև չի ուզում, որ Սրբունը ուրիշների ուսերին բեռ դառնար: Նա մտածում էր միայն պատվի մասին: Հաճի աղան երբ իմացավ, որ թուրքերը գալու են քաղաք, առաջին բանը, մտածեց, իր տունը, ընտանիքը և հարստությունը փրկելն էր, իսկ եթե դաչիաջողվի, ինքն իրեն փրկելը: Նա իրեն ավելի էր սիրում, քան իր ընտանիքը: Վերջում Հաճի աղան զղջում է իր արածի համար, փնտրում է քրոջը, բայց չի գտնում:Հաճի աղան ինքն իրեն չի ներում այդ արարքը, հոգեպես շատ տանջվում է, հասկանում, որ ավելորդ մարդ աշխարհում գոյություն չունի: Մահից առաջ ,ավելորդիե հիշատակի համար ոսկի է տալիս տերտերին աղքատներին բաժանելու համար: Իմ կարծիքով նա շատ սխալ արեց, որ միայն մտածեց իր հարստության մասին: Հեղինակը ուզում էր ասել, որ հարստությունը մի օր կարող է վերջանալ, իսկ ընտանիքի սերը միշտ քեզ հետ է: Այս թեմայով իրականացրեցինք բաց դաս:

Դասի նպատակներն էին

Ուսուցանող ՝ բնութագրել պատմվածքի գլխավոր հերոսներին, վերլուծել կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները:

Դաստիարակչական՝ սովորողի մոտ արմատավորել և դաստիարակել այն, որ ամենաթանկ և մեծագույն հարստությունը մարդն է, պետք է սիրել, օգնել, խնամել ու խնայել նրան, քանի որ մարդն անփոխարինելի է:

Զարգացնող՝ համեմատել մարդկային արարքները, առանձնացնել լավն ու վատը, մերժելին և ընդունելին:

Մեթոդը՝ <<Երիցուկ>>

Նյութերը՝ երիցուկի թերթիկներ, գունավոր մատիտներ, 2 պաստառ

Դասի ընթացքը.

Խթանման փուլ:

Առաջադրված հարցերով վերհիշել պատմվածքի բովանդակությունը, գործողութ-յունների զարգացման ընթացքը: /10 րոպե/

Իմաստի ընկալում:

Դասարանը բաժանել չորս խմբի՝ յուրաքանչյուր խմբում վեց աշակերտ:,Երիցուկե մեթոդով ներկայացնել գլխավոր հերոսներին: Երկու խմբի հանձնարարել ներկայացնել Հաճի աղային, իսկ երկու խմբի՝ Սրբունին: Խմբերին բաժանել երիցուկի թերթիկները, որոնց վրա գրված կլինեն հարցերը:

Հաճի աղային վերաբերող հարցեր.

Ո՞վ էր Հաճի աղան: Կյանքի ինչպիսի՞ ճանարարհ էր անցել:

Եթե ես ճիշտ եմ հասկացել, ,թուրքը գալիս էե արտահայտությունը պատմական այն ժամանակաշրջանն է ներկայացմում, երբ…

Ինչո՞ւ Հաճի աղան խստացավ ,անգթացավ և որոշեց փրկել կարևորագույնը՝ թողնելով ,ավելորդը:

Ի՞նչ կլիներ, եթե սահնակում միայն մեկ հոգու տեղ լիներ:

Գնահատել Հաճի աղային դեպքերի ժամանակ և դեպքերից ամիսներ անց: Արդյո՞ք շրջապատում նրա նման մտածող մարդիկ կային:

Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Հաճի աղայի տեղը:

Սրբունին վերաբերող հարցեր.

Ո՞վ էր Սրբունը և ինչու՞ էր ապրում եղբոր տանը:

Եթե ես ճիշտ եմ հասկացել, ի բնե աշխատասեր և ինքնասեր կինը ընտանիքի կար ու կարկատանը և գուլպա գործելը իր վրա էր վերցրել, որպեսզի…

Ինչու՞ էր Սրբունը լալիս ճանապարհի պատրաստության ժամանակ:

Ի՞նչը կփոխվեր , եթե Սրբունը գնար նրանց հետ:

Գնահատել Սրբունին:

Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Սրբունի տեղը:

Աշխատանքը ավարտելուց հետո խմբերը երիցուկի նման փակցնում են երկու պաստառ-ներին՝ վերնագրելով ՝ 1. ,Սրբունե, 2.,Հաճի աղաե:

Ներկայացնում են աշխատանքները: Նույն հերոսին երկու խմբով ներկայացնելը հնարավորություն է տալիս լրացնելու միմյանց, համադրելու ,տարբեր տեսանկյուններից դիտարկելու և ընդհանրացնելու: /25 րոպե/

Կշռադատման փուլ:

Քննարկում:

ա.Պատմվածքի վերջում ինչպե՞ս է Հաճի աղան բացատրում ,ան ավելորդ էե արտահայտությունը:

բ.Մահից առաջ ինչու՞ է խոստովանահորը ասում. ,Մեղա՛ քեզի, մեղա՛…ե: /10 րոպե/

Տնային առաջադրանք: Աղյուսակով ներկայացնել՝

1. <<Կյանքում ի՞նչն է ավելորդ>> ,
2. <<Կյանքում ի՞նչն է կարևոր>>

<<Ավելորդը>> պատմվածքը աշակերտներն հնարավորություն տվեց արժևորել և սիրել իրենց ունեցածը, հասկանալ, որ հարազատները շատ կարևոր ու մեծ դեր ունեն մեր կյանքում: Ունեցվածք միշտ էլ կարող ենք ստեղծել և ունենալ, սակայն հարազատի կորուստ անկարելի է փոխել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետեւյալ եզրահանգումներին.

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգեւոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել եւ փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու եւ հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ գրականությունառարկան:

Առաջարկում եմ՝

Կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային եւ

համամարդկային ընդհանրական չափանիշները, եւ վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դեմիրճյան Դ.,Երկերի ժողովածու, հատ. II. Պատմվածքներ, ,Սովետական գրողե հրատարակչություն ,Երևան, 1977:
2. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա,Ե.,2006:

3. Հովհաննիսյան Ս., Հայ գրականության ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորում ևմեթոդական մշակում, 1-ին և 2-րդ մաս, Ե.,1978:
4. Մկրյան Մ.,Հայ հին գրականության պատմություն Ե.,1976:
5. Ջրբաշյան Է.,Թումանյանի պոեմները,Պետական համալսարանի հրատարակչություն,Երևան,1964:

6. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով ուղեցույց,1-7պրակ: